

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 25. 08. 2017թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 29 (քսանինն) անդամից 25-ը (քսանհինգը՝ 3 -
ը՝ հեռահար կապով):

**1. ՇՊՀ-ի ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԿՇԻՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:**

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին
համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն - պրոռեկտոր **Ա. Տարմանյան**

**2. ՇՊՀ-ի ԴԱՍԱԽՈՍԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:**

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի գործատուների հետ
համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
Բ. Պողոսյան

3. ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

**3.1. ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 3 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ, ՇՊՀ-Ի ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ:**

Հաղ.՝ ռեկտոր Ս. Մինասյան

**3.2. 2017-2018 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՇՊՀ-Ի ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ:**

Հաղ.՝ ռեկտոր Ս. Մինասյան

**3.3 2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ ՇՊՀ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ
ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ:**

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ
համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
Բ. Պողոսյան

**3.4 «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ- 2015 »
ՇՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ:**

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն - պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

1.ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-Ի ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԿՇԻՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն - պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

Պրոռեկտոր Ֆարմանյանը ներկայացրեց, որ բուհերի կրեդիտային համակարգով ուսումնառության կարգի համաձայն յուրաքանչյուր բուհ պետք է մշակի իր կարգը՝ գնահատման բաղադրիչներն ու կշիռները: Նա նշեց, որ նախորդ գիտական խորհրդի նիստում հաստատվեց ՄԿԾ-ների մեկ բաղադրիչ մասը՝ փոփոխված ուսումնական պլանները, նոր ուսումնական տարվա նախաշեմին ամբիոններում առկա են առարկայական նկարագրերը, ԹՕՊ -երը իրենց վերջնարդյունքներով:

Բուհն ունի գնահատման քաղաքականություն ըստ ուսումնառության արդյունքների: Գնահատման համակարգն ունի երկու բաղադրիչ՝ ձևավորող (ակտիվություն - 40) և ստուգիչ:

Ֆարմանյանը ներկայացրեց ԳՊՄԻ-ի կրեդիտային համակարգով ուսումնառության կարգի գնահատման բաղադրիչներում և կշիռներում կատարված փոփոխությունները, որոնք բխում են փորձագիտական խմբի դիտարկումներից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԿՇԻՌՆԵՐԸ

Բակալավրի /առկա/հեռակա/ և մագիստրոսի կրթական ծրագրերի դասընթացների վերջնարդյունքների գնահատման մեթոդները ներկայացվում են առարկայի նկարագրում և ԹՕՊ-ում:

Կրեդիտային հենքով կրթական ծրագրի բազմագործոնային (վերջնական) գնահատումը ձևավորվում է երկու և երեք գործոնների հիման վրա՝ համապատասխան կշիռներով:

ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԵՐԿՈՒ ԳՈՐԾՈՆ	
լսարանային ժամաքանակը փոքր 64-ից	
ԳՈՐԾՈՆՆԵՐ	ԿՇԻՌ
ակտիվություն	40 %

ամփոփիչ ստուգում	60 %
ԵՐԵՔ ԳՈՐԾՈՆ	
լսարանային ժամաքանակը 64 և ավելի	
ԳՈՐԾՈՆՆԵՐ	ԿՇԻՌ
ակտիվություն	40 %
ստուգում 1	30 %
ստուգում 2	30 %

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԵՐԿՈՒ ԳՈՐԾՈՆ	
ԳՈՐԾՈՆՆԵՐ	ԿՇԻՌ
ստուգողական աշխատանք կամ անհատական աշխատանք	40 %
ամփոփիչ ստուգում	60 %

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

ԵՐԿՈՒ ԳՈՐԾՈՆ	
ԳՈՐԾՈՆՆԵՐ	ԿՇԻՌ
ստուգողական աշխատանք կամ անհատական աշխատանք	40 %
ամփոփիչ ստուգում	60 %

ՀՀ Ազգային բանակից զորացրված, տեղափոխված, վերականգնված և շարժունությամբ սովորող ուսանողների գնահատումը բազմագործոնային չէ: Ստուգման արդյունքում /գրավոր կամ բանավոր/ ստացած միավորը համարվում է վերջնական:

Ակտիվությունը հաշվարկվում է գնահատված կրթական վերջնարդյունքների միջին թվաբանականով: Ուսանողը պարտավոր է յուրաքանչյուր վերջնարդյունքի ստուգումից կուտակել առնվազն 40 միավոր: Հակառակ դեպքում այն կարող է վերահանձնել լուծարքային

շրջանում: Յուրաքանչյուր վերջնարդյունքի գնահատականն ամրագրվում է դասամատյանում:

Ընթացիկ ստուգման հարցատոմսը պարունակում է կրթական վերջնարդյունքների քանակին համապատասխան հարցեր: Ընթացիկ ստուգման արդյունքը համարվում է դրական, եթե ուսանողը կուտակել է յուրաքանչյուր հարցին տրված միավորի 40%-ը: Հակառակ դեպքում այն կարող է վերահանձնել լուծարքային շրջանում:

Դրական ստացած գնահատականի վերահանձնում չի թույլատրվում:

2017-2018 ուստարվա բակալավրի առկա/հեռակա, մագիստրոսի և հետազոտողի (ասպիրանտուրա) կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի հերթերի, ժամատախտակի, ուսումնական գործընթացի և խորհրդատվությունների կազմակերպման, գիտելիքների գնահատման, լուծարքային շրջանի կազմակերպման, ամփոփիչ ատեստավորման և պրակտիկաների կազմակերպման ժամանակահատվածների մասին տեղեկանալ կից ներկայացված հրաման 1-ից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» Պետական ոչ առևտրային կազմակերպության կրեդիտային համակարգով ուսումնառության կարգի գնահատման բաղադրիչների եվ կշիռների փոփոխությունները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ՝

ՇՂԶ-Ի ԴԱՍԱԽՈՍԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր **Բ. Պողոսյան**

Պրոռեկտոր Պողոսյանը ներկայացրեց դասախոսի ծանրաբեռնվածության ձևավորման հիմնական նորմերի փոփոխությունները:

Դասընթացի կրթական վերջնարդյունքների ստուգում	64 լսարանային ժամից պակաս - 1 ուսանողի համար 0.25 ժամ
	64 և ավելի, 96 -ից պակաս լսարանային ժամ- 1 ուսանողի համար 0.5 ժամ
	96 և ավելի լսարանային ժամ - 1 ուսանողի համար 0.75 ժամ
Հետազոտական աշխատանքի ղեկավարում	I կիսամյակ – 16 ժամ

	II կիսամյակ – 16 ժամ
	III կիսամյակ – 20 ժամ
	IV կիսամյակ – 20 ժամ
Մագիստրոսական թեզի ղեկավարում	IV կիսամյակ – 10 ժամ
Ավարտական աշխատանքի ղեկավարում	20 ժամ
Ասպիրանտի ղեկավարում (առկա/հեռակա)	տարեկան 50 ժամ
Կուրսային աշխատանքի ղեկավարում (մեկ ուստարում՝ 10 աշխատանքից ոչ ավելի)	6 ժամ
Մանկավարժական (արտադրական) պրակտիկա	4 շաբաթվա դեպքում՝ 1 ուսանողի համար 8 ժամ 5 շաբաթվա դեպքում՝ 1 ուսանողի համար 10 ժամ
Հոսքային դասախոսություն	1 խումբը՝ մինչև 90 ուսանող

Պրոռեկտոր Պողոսյանը ներկայացրեց նաև, որ 2017-2018 ուստարում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով լրիվ ծանրաբեռնվածությամբ մասնագիտական խումբ սահմանել 11 և ավելի թվով ուսանողների կուրսերը, իսկ 10 և 10-ից պակաս ուսանողների քանակով կուրսերը համարվում են թերբեռնված: Թերբեռնված կուրսերում դասավանդող դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունը հաշվարկել 50 %-ով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության դասախոսի ծանրաբեռնվածության ձևավորման հիմնական նորմերի փոփոխությունները:

2017-2018 ուստարում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով նախատեսվում է առկա և հեռակա ինտեգրված կուրսերով դասընթացների անցկացում, ընդ որում լրիվ ծանրաբեռնվածությամբ մասնագիտական խումբ սահմանել 11 և ավելի թվով ուսանողների կուրսերը, իսկ 10 և 10-ից պակաս ուսանողների քանակով կուրսերը համարվում են թերբեռնված: Թերբեռնված կուրսերում դասավանդող դասախոսը ստանում է լսարանային ժամերի 50 %-ը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.1. ԼՍԵՑԻՆ՝

**ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 3 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ, ՇՊԷ-Ի ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՑԹԻ
ՎԱՐՃԱՐԱՆԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ:**

Հաղ.՝ ռեկտոր Ս. Մինասյան

Ռեկտոր Ս. Մինասյանը շնորհավորեց գիտական խորհրդի անդամներին և ներկայացրեց, որ ՇՊՀ-ին կառավարության կողմից հասկացված գույքաբաժինը հարստացվեց 308797600 ՀՀ դրամով՝ անշարժ և շարժական գույքով:

Պարոն Մինասյանը նշեց, որ ամիսներ առաջ համալսարանի գիտխորհուրդը որոշմամբ դիմել է ԿԳ նախարարին՝ խնդիրը ներկայացնելու կառավարությանը: Կառավարությունն ընդառաջել է և համալսարանի հետագա աշխատանքները նպատակասլաց իրականացնելու համար, առաջարկեց որոշումը ներկայացնել ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի քննարկմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ներքոգրյալ որոշումը ներկայացնել ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի քննարկմանը. միավորել ՇՊՀ ավագ դպրոցը, մշակույթի վարժարանը և վերջիններիս գործունեությունը ծավալել Գյումրու թիվ 3 ավագ դպրոցի շենքում՝ ազատելով ՇՊՀ-ի երկրորդ «Դ» մասնաշենքը: Այն տրամադրել ՇՊՀ-ի Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնին և ՇՊՀ-ի քոլեջին:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.2. ԼՍԵՑԻՆ՝

2017-2018 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՇՊՀ-Ի ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ:

Հաղ.՝ ռեկտոր Ս. Մինասյան

Ռեկտոր Ս. Մինասյանը ներկայացրեց, որ հաջորդ տարվանից «Բարձրագույն կրթության մասին» օրենքով նախատեսվում է անկախ մասնագիտությունից ընդունելության քննություն հանձնել հայոց լեզվից, ուստի 2017-2018 ուստարուց ՇՊՀ-ի ավագ դպրոցում կազմակերպվելու են լրացուցիչ դասընթացներ հայերեն և անգլերեն լեզուներից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաղորդված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.3. ԼՍԵՑԻՆ՝

**2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ ՇՊՀ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ:**

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
Բ. Պողոսյան

Պրոռեկտոր Պողոսյանը ներկայացրեց ուսանողների վերականգման և տեղափոխման ընթացակարգը:

Ռեկտոր Ս. Մինասյանն առաջարկեց բանակից վերադարձած, այլ բուհերից, հեռակա ուսուցման համակարգից առկա համակարգ տեղափոխվող և միջին մասնագիտական հաստատություններից համալսարանում կրթությունը շարունակող ուսանողների քննությունների կազմակերպման և ընդունման նպատակով կազմել հանձնաժողովներ՝ դեկանների գլխավորությամբ ու ամբիոնի վարիչների ներգրավվածությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Դեկաններին և ամբիոնի վարիչներին հանձնարարվեց այսուհետև, բանակից վերադարձած, այլ բուհերից, հեռակա ուսուցման համակարգից առկա համակարգ տեղափոխվող, միջին մասնագիտական հաստատություններից համալսարանում կրթությունը շարունակող ուսանողների քննությունների ընդունման նպատակով կազմել հանձնաժողովներ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.4. ԼՍԵՑԻՆ՝

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2015թ-ի» ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ:

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն - պրոռեկտոր **Ա. Տարմանյան**

ՇՊՀ-ում «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2015» շրջանակներում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Բյուրեղային նյութերում կառուցվածքային արատների հայտնաբերման

նոր ռենտգենադիֆրակցիոն մեթոդների և տեխնիկական միջոցների մշակումը» թեմայի՝ (ծածկագիր՝ 15SH-008) 01.09.2015թ.-31.08.2017թ. ժամանակահատվածում իրականացված աշխատանքների վերաբերյալ ամփոփիչ հաշվետվություն (զեկ՝ թեմայի գիտական ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Դրմեյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ս. Սարգսյանը, գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր ֆ.մ.գ.թ., դոցենտ Ա. Տարմանյանը, բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, ֆ.մ.գ.թ., դոցենտ Ե. Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հիմք ընդունելով, որ 01.09.2015թ.-31.08.2017թ. ժամանակահատվածում գիտահետազոտական խմբի կողմից աշխատանքներն ընթացել են ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախապես հաստատված օրացուցային պլանով ու պայմանագրով նախատեսված առաջադրանքին համապատասխան, և հետազոտության արդյունքները հրատարակվել են տաս գիտական հրապարակումներում՝ ընդունել 15SH-008 պետբյուջեով ֆինանսավորվող ՇՊՀ-ում «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2015» շրջանակներում իրականացվող թեմայի գիտական ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Դրմեյանի կողմից ներկայացված ամփոփիչ հաշվետվությունը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: